

Թեան անդրադարձու թեան փորձին մէջ ճրագին և գոգաւոր հայլին մէջն որ ապակեայ Թիթեղը գրինք, ջերմածնի ճառագայթները արգիլեց, և միայն լուսոյն ճառագայթները Թողուց որ անցնին : Եւ պատուհանին ապակիներն ալ որ զարկած արեւէն չտաքնան նէ, կրնան խուցին օդովը ներսի կողմանէ տաքնալ :

Արովհետեւ մթնոլորտը արեւուն ճառագայթներէն որ մէջէն կ'անցնին չտաքնար, հապա ինչպէս տաքութիւն կ'առնէ . վասն զի երկրային ջերմածինն որ քիչ մը խիտ շրջասփիւռէ առանց պակսելու չկրնար անցնիլ, ինչպէս օդը կամ ջուրը, բայց կը տեսնենք որ առանց պակսելու մթնոլորտէն կ'անցնի, անանկ որ եթէ ամպ մը կամ ուրիշ օտար մարմին մը արգելք չըլլայ՝ երկրային ցոլացմանէն առաջ եկած տաքութիւնը բոլոր միջոցին մէջ կը ծաւալի : — Երաւ է որ տաքութիւնը ցոլացմամբ Հաղորդուի մթնոլորտին, բայց տաք մարմնոց դաշելով՝ ինչպէս հաստատուն և հեղանիւթ մարմինները, ասանկ ալ օդը տաքութիւն կ'առնէ : () Դուն այն կարգը որ անմիջապէս երկրին դպած է, երկրէն կ'առնէ տաքութիւնը . և անանկով իրեն տեսակարար ծանրութիւնը կը պակսի, ու վեր կ'ելլէ, և ուրիշ կարգ մը օդոյ իր տեղը կ'անցնի . այն ալ կը տաքնայ, այն ալ վեր կ'ելլէ, և անանկ որ օդոյն ամենայն կարգը երկրիս

դաշելով կը տաքնայ : Արեւմ երկրիս երեսին տաքութիւնը մթնոլորտին տաքութեանը աղբիւրն է : Բայց այս տաքութիւնն որ մթնոլորտին կը հաղորդուի, ոչ ցոլացմամբ կը հաղորդուի, և ոչ մէկ մասնրկէ մէկալ մասնրկ անցնելով, ինչպէս փոխանցիչ մարմնոյ վրայ կ'ըլլայ . և օդուն ամէն մէկ մասնրկունքը տաքնալու համար պէտք է որ երկրիս դաշի :

Արովհետեւ երկրէն՝ չէ թէ արեւէն է, որ մթնոլորտը ջերմածին կ'ընդունի, դիւրաւ մարդ կ'ըմբռնէ թէ լեռնային տեղումնք պէտք է որ աւելի ցուրտ ըլլան, քան թէ դաշտայինները և հովիտները : Եթեք որ մթնոլորտը քանի որ երկրիս երեսէն հեռանայ, այնչափ աւելի իրեն խտութիւնը և իրեն ծանրութիւնը կը պակսի : Արեւմ տաք օդը այնչափ միայն կրնայ բարձրանալ, մինչև որ օդուն այն կարգին հանդիպի, որուն որ ինքն ալ հաւասար խտութիւն ունենայ . և չկրնար մթնոլորտին աւելի բարձր կողմերը ելլել՝ մինչև որ առաջ վարի մասունքը չտաքնան : Եւ մառը տաք կլիմաներու մէջ ալ այնչափ երկայն չէ, որ կարենայ ձմեռը բարձր լեռանց գլուխը դիզած ձիւները հալեցնել . թէպէտ և արեւուն ճառագայթները միշտ ան լեռանց գլուխը կը զարնէ, որովհետեւ իրենց բարձրութեանը պատճառաւ քիչ կ'ըլլայ որ ամպերը արեւուն ճառագայթներուն արգելք ըլլան :

Հ Ն Ա Ւ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճանապարհորդութիւն Պոդիկտեոսի 'ի հոսմ :

Թ Ո Ւ Ղ Թ Գ . — Շարունակութիւն : (Տես երես 222)

Հաղիւ թէ այս խօսքերս լմնցուց, մէյմ՝ ալ անգիէն հիւպատոսը ներս մտաւ, որ ամէն առաւ, տէրութեան գործողութիւնները սկսելէն առաջ, կու գայ ժամ մը որդւոյն հետ կ'անցընէ : Ուզեց որ մեր խօսակցութեան նիւթն իմանայ, ու անոր վրայ հաւնելու կերպ ցուցուց : Ես ու Սիրոս յարգութեան համար քաջուեցանք դուրս ելանք, ու գաւթէն երթալու ատեն՝ խել մը մարդկանց բազմութեան մէջէն անցանք, որ կարծես

Թէ հոն ժողովեր էին ու հիւպատոսին կը սպասէին : “ Կ'ուզե՞ս, ըսաւ ինծի Սիրոս, մէկ գաղափար մը ունենալ Հռովմայ ժողովրդեան վրայ : Եկ հոս մէկ կողմը սա նստարանիս վրայ քովս նստէ . մենք կրնանք ամէն բան տեսնել առանց աչքի տակ իյնալու, և ես քեզի կը բացատրեմ առջևնիս երեցած տեսարանին այլ և այլ մասերը :

“ Եւ ինչ խուրձերով բեռնաւորած տասուերկու մարդիկը, մէկ կարգ շարուած, որոնք իրենց ծանր

կերպովը պատերազմի պատրաստուած զինուոր-
ներու կը նմանին, Դուրախէն են: Ամէն առտու
կանուխէկ կու գան հիւպատոսին տունը, ու
միշտ երբոր գուրա ելէ իբրեւ պաշտօնեայ՝ հետը
կ'երթան: Այսպիսի պատիւ կը տրուի միայն մեծ
ատենակալաց, ու այս նուիրակաց թիւն ալ իւ-
րաքանչիւրին պաշտամանը պատուոյն համեմատ է:
Հիւպատոսներունը տասուերկուք է, որ լատիով-
նի տասուերկու ժողովուրդները կը նշանակէ:
Հռոմուլոս այս սովորութիւնս Ետրուրացուցմէ
առաւ, ժողովրդեան սիրտը վախ ձգելու համար.
և այս պետական իշխանութեան նշանը պահուե-
ցաւ թագաւորութեան վերցուէն ետքն ալ:
Դուրախաց պաշտօնն է բազմութեան մէջ ճամ-
բայ բանալ տէրութեան մեծերուն, անոնց աս-
տիճանին համեմատ պատուոյ նշանները պահան-
ջել, ու յանցաւորները պատժել՝ անոնց վճիռը
գատաւորները տալէն ետեւ. զորոնք խուրձերուն
վրայ պլլած կաշուովը նախ կը կապեն ու ետքը
այն խուրձերուն գաւազաններովը կը ծեծեն, և
մեծ յանցանք ունեցողներուն գլուխին կը կտրեն
այն խուրձին մէջէ եղած տապարովը: Այսպիսի
պաշտօնեայք, ինչպէս որ կրնաս երևակայել,
առավագ մէջէն կ'ընտրուին, սակայն պէտք է որ
ազատ ծնած ըլլան:

“Այն մարդկանց բազմութիւնը որ կը տեսնես
ինծի պէս հագուած ու այս տունս կը մտնեն
կ'ըլեն, ամենքն ալ իմ թշուառութեանս ընկեր-
ներն են. իրաւ որ իմ վիճակս անոնցմէ տարբեր
է, բայց իրաւունքնիս նոյն է, որովհետեւ ես ալ
իրենց պէս գերի մըն եմ: Անէոս Հոկտաւիոս ա-
տոնցմէ ունի հազարէն աւելի: Հռովմայեցիք ի-
րենց մեծ փառք կը սեպեն բազմութիւ ծառանե-
րով պաշարուած ըլլալը. այս աշխարհիս տիրա-
պետողներէն ոմանք այնչափ շատ ծառայ ունին,
որչափ որ հպատակ չեն ունեցած Հռոմերոսին մէջ
յիշուած թագաւորները: Այս գոթաղջներս ի-
րենք տեսակ են: Առջինին մէջն են պատերազմի
մէջ բռնուածները, որոնք աճուրդի կը ծախուին
գետինը տնկած նիզակի մը տակը՝ ի նշանակ պա-
տերազմական իրաւանց. երկրորդ կարգիներն են
վաճառականներէն գնածները, զորոնք կը վաճա-
ռեն պտուղներէով հասարակաց տեղուանքը, գը-
լուխին ծաղկեայ պսակ մը գրած, թէ որ ծա-
խողը ուզենայ ապահովընել ճամբարիտ ըլլալը այն
ամենայն հանգամանքները որոնք թղթի մը վրայ
գրած են, կամ թէ որ չուզենայ վաճառականը
անոնց ձրիցը երաշխաւոր ըլլալու, առանց պսա-
կի, գլուխին միայն գլխարկ մը գրած կը պտու-
ցընէ. իսկ երրորդ կարգի կը սեպուին անոնք որ
իրենց տիրոջը տունը ծնած են: Այս ետքիներ-
ուս վիճակը աւելի քաղցր է. որովհետեւ պղտի-
կուցմէն ծառայութեան մէջ սովորած ըլլալով,
այն թշուառ վիճակը իրենց վրայ այնչափ ծանր
չերևար. և իրենց տիրոջը հետ աւելի ընտանի են.
և իբր թէ անոր ընտանեացը ճիւղ մը կը կազմեն:

“Օրէնքը բացարձակ իշխանութիւն կը շնորհէ
տէրերուն իրենց գերեացը վրայ. ուզածնուն պէս
զանոնք կը պատժեն, կը չարչիկեն և երբեմն կը
սպաննեն ալ, առանց պարտք ունենալու ըրածնուն
վրայ գատաւորին համար տալու: Որչափ անգամ
տեսեր եմ հոգեվարքի հասած գերիներ, որ ե-
րեսի վրայ մնացած, անգարման, կենալու տեղ

մը չունենալով, Հռովմայ փողոցներուն մէջ ին-
կած կը քաշկռուէին, ու յուսահատ կը բող-
բէին զիրենք գուրա ձգողներուն դէմ՝ անոնց ա-
գահութեանը վրայ, ու միանգամայն կը խնդրէին
անցաւորներէն որ իրենց վշտացը վերջ մը տան:
Եւ թէ որ ասոնցմէ մէկը անակնկալ գիպուածով
մը առողջութիւնը գտնելու ըլլայ, իրեն տէրը ի-
րաւունքը չկորսնցնէր, թէպէտ և զինքը երեսի
վրայ ձգած ժամանակը կարծես թէ իր իրաւուն-
քէն կը հրաժարէր, և այս գոթաղջները կը ստի-
պուէին նորէն անոնց լուծին տակը մտնելու:

“Կտոր մը հանձար ունեցող գերիները, իրենց
տիրոջը անձին վերաբերեալ ծառայութիւնը կը
նեն, ու ինչ պաշտօնի մէջ որ ըլլան այն պաշտօնին
անունովը կը կոչուին: Սէնէլ-ալէ-ալ անկողինը կը
հոգայ. Հադէ-ալ-ալ-ալ գգեստեղէնները. Սէլ-
նայար-ալ-ալ սեղանը կը գնէ կը վերցընէ: Իսկ խիստ
մեծ տունները մէկ ուրիշ մ'ալ կայ, որուն պաշ-
տօնն է յիշեցընել տիրոջը մէկալ գերիներուն ա-
նունները, և ինքը Ան-ալ-ալ կ'ըսուի:

“Սովորաբար գերի մը իր պարագը կատարելէն
ետեւ հրաման ունի մնացած ժամանակը իրեն շա-
հուն գործածելու: Ասոր վրայ կ'աւելցընէ նաև
այն քիչ բանն որ իրեն խնայողութեամբը կրնայ
աւելնալ չորս գրիւ ցորենէն ու հինգ գէնար սոր-
կէն, զորն որ ամէն ամիս իրեն ապրուստին հա-
մար կու տան իրեն. և ասոնցմով կը ստանայ իր
սեփական ինչքը, որուն օրինաւոր տէրն է, և
զորն որ կրնայ նաև կենդանութեան ժամանակը
ուզածին պէս գործածել տիրոջը հրամանաւ: Իսկ
բարիք մը թէ որ ստանալու ըլլայ՝ ըստ օրինաց տի-
րոջը ստացուածքին մաս կը համարուին:

“Հռովմ գտնուած գերիներու անթիւ բազմու-
թեանը պատճառաւ, խիստ զգուշութիւնները
նշուառ ստիպուել են անոնց դէմ: Արգիլուած է
իրենց ինչ և իցէ սեսակ զէնք կրելու, երբեմն հա-
սարակապետութեան մեծ վտանգի մէջ ընկած
ժամանակ՝ պէտք ըլլալով զիրենք ալ զօրաց մէջը
խառնելու, յաղթութենէն վերջը իրենց ազատու-
թիւնը տրուեցաւ: Ամենին արգելուած է իրենց
տեղ մը մէկ տեղ ժողովուելու, և թէ որ յանկարծ
հանդիպի որ գերի մը իւր տէրը սպաննէ, բոլոր
գերիները, և նաև անոնք որոնց ազատութեանը
կտակ ըրած է, կրնան ամենքը մէկ տեղ մահուան
գատապարտուիլ: — Այս որ լսեցի, ինչ բար-
բարոս օրէնք կանչեցի: Այդ Հռովմայեցիք, ո-
րոնց այդչափ քաղցր է ազատութիւնը, պէտք չէր
որ գուլթերին շարժէր, ու բաւական գոթաղջու-
թիւն սեպէին այնչափ մարդիկներուն այն ազա-
տութենէն զրկուած ըլլալին, առանց ուզելու
երկթէ լծոյ մը տակն ալ զիրենք նուաճել: — Ամե-
նեին այդ ազատութեան սէրն է, պատասխանեց
ինծի, այդչափ անգութութեանց պատճառը. այս
երկրիս մէջ անոնք որ ազատութիւնին կորսնցը-
ցեր են, ալ մարգու տեղ չեն սեպուիր. հոս տեղը՝

1 Այս անկարգութիւնը խափանելու համար,
Կլոդիոս կայսրը ազատ հրատարակեց իր տիրոջն
երեսէ ձգուած գերիներ. իսկ Արքիանոս կայսրը
մահապարտ հրատարակեց այն տէրը, որ իր գե-
րին կը սպաննէ:

ազատ մարդիկ չափազանց ազատութիւն կը վայելեն, ու գերիներն ալ չափազանց գերութիւն կը կրեն՝ քան թէ աշխարհքիս ո՛ր և իցէ տեղ: Տեսայ անգամ մը որ տան մը բոլոր գերիները տանջանքի դրուեցան որպէս զի խոստովանին իրենց տիրոջը յանցանքը՝ որուն համար ամբաստանուէր էր: Այլ ի՞նչ ըսեմ. Յանցանքի դատաստաններու մէջ եղեր է երբեմն որ ամբաստանողը ուզեր է որ տանջանքի դրուի ուրիշ քաղաքացւոյ մը գերին, որն որ նոյն դատաստանին հետ ամենեւին վերաբերութիւն մը չունէր: Այդպիսի դիպուածներու մէջ կը պահանջուի նաև տիրոջը հաւանութիւնը, որն որ սովորաբար թոյլ կու տայ, այսու պայմանաւ՝ որ եթէ գերին փորձին տակը մեռնելու ըլլայ, գինը վճարուի: Գուցէ այնպէս մը երևնայ քեզի որ ես այս դժբաղդ մարդկանց վրայ չափազանց խօսքս կ'երկընցընեմ. բայց ո՞վ չուզեր խօսիլ իր գտնուած վիճակին վրայ, մանաւանդ թէ որ այն վիճակը նոյն իսկ խեղճութիւնն ըլլայ: Յաջողութեան մէջ լռելը դիւրին է, բայց դժբաղդութիւնը շատախօս կ'ընէ զմարդը:— Ա՛հ, ըսի իրեն, ինչպէս կրնամ ցաւակից չըլլալ այն աղէտից որոնց համը անուշտ ես ալ կ'առնէի, թէ որ Աթէնքին յաղթողը քիչ մը աւելի խստութիւն բանեցընելու ըլլար:

« Բայց ատուք ի՞նչ մարդիկ են, ըսի, որ պարզ բաճկոն մը հագուէր են, մորուք ու մազերնին ածիլած մէկալ հոս գտնուած քաղաքացոյ պէս, բայց անոնցմէ միայն տեսակ մը խոյրով կը տարբերին: Ասոնք տեսնք են, թէ ծառայք: Վասն զի քիչ մը առաջ ասոնցմէ մէկը գերիի մը հրաման մը կու տար. որն որ թէպէտ և անոր հնազանդել կը ցուցնէր, բայց կարծես թէ ընտանութեամբ մը հետը կը խօսէր:— Տասնըհինգ օր առաջ, պատասխանեց Սիրոս, իրարու հետ հաւասարափնջակ էին, անոր համար իրարու ընտանի են. բայց մէկը գերութենէն ազատելով՝ հռովմայ քաղաքացի եղաւ, իսկ միւսը գեռ գերի է:

« Երտակը պէտք է ըսել. գիտնաս որ գերւոյ մը վիճակը աւելի գէշ է հռովմայեան թէ Յունաստան, բայց միշտ աչքին դիմացը կայ բարեբաղդութեան հասնելու յոյս մը: Մեր աշխարհքի հարստութիւնը չափաւոր ըլլալուն, գերին շահաւոր ստացուածք մըն է, զորն որ տէրը գոռալարալ յանձն կ'առնու ձեռքէ հանելու. իսկ ընդհակառակն հռովմայ մէջ գերին դիւրաւ ազատութիւն կը ստանայ իբրեւ վարձք իրեն ծառայութեցը: Ասոր յայտնի ապացոյցն է այդ ազատագրաց բազմութիւնը, զորոնք չորս դիգ կը տեսնես: Սակայն ամենեւին մի կարծեր թէ ասոնք բուն հռովմայեցւոյ հաւասար կը սեպուին. թէպէտ և հարկաւոր իրաւունքները կը վայելեն, բայց վրանին համարմունք չըլլալով՝ ստորին քաղաքացիներէն ալ վար կը սեպուին. անոր համար հասարակապետութեան ցած պաշտօններուն միայն կրնան հասնիլ. և գէոններու մէջ չեն կրնար մտնել, ուսկից նաև իրենց որդիքն ալ գուրս են, միայն ծովային խմբին մէջ կրնան մտնել: Քիչ յարգ ունեցող ցեղերու կարգը միայն կրնան սեպուիլ, և այն կարգով միայն կրնան տալ իրենց քուէն ժողովրդեան ժողովներուն մէջ: Իրենց վերաբերեալ օրէնքները իրենց առջի նուաստութիւնը կը յիշեցնեն. և նաև իրենց ազատութիւնն ալ ձրի շնորհք մըն է:

Եւ որովհետև ստիպուած են միշտ իրենց հին տեսարցը յարգութեան նշաններ տալու, թէ որ յանկարծ իրենց տեսարցը խեղճութեան մէջ ինկնան, անոնց օգնելու համար պարտական են տալու իրենց ամէն ունեցածներն: Իրաւ է որ երախտագիտութիւնը իրենցմէ զայս կը պահանջէ, բայց այս յայտնի օրէնք ըլլալով՝ կու գան կ'առնեն իրենցմէ ինչ տիրելի ու ազնիւ բան մը որ ունին: Եւ թէ որ մէկը այս պարտքէս ետ կենայ, նորէն գերութեան վիճակը կ'իյնայ ու հանքերու մէջ աշխատելու կը խրկուի: Եւ այս ալ կայ որ մէկ կերպով մը չեն կրնար բուն հռովմայեցւոյ մը աղջկանը հետ կարգուիլ. և միայն այս խտրութիւնը բաւական է զիրենք հին քաղաքացւոյցմէն որոշելու համար: Թէպէտ և այսչափ անարգութեան և ազատագիրները, բայց և այնպէս համարմունք ունին քաղաքացւոյց առջև. մէկ բնական զգացմունք մը զմեզ ուրիշներուն սիրելի կ'ընէ, թէ այն բաւոյն համար որ մենք կ'ընենք, և թէ անոր համար որ մենք ուրիշներն ըրեր են. ազատագրի տէր մը երբ կը տեսնայ որ հարկաւոր մարդու մը տեղ կը գնեն զանիկայ որուն ինքը ազատութիւն տուեր է, մեծ տխրութ մը կ'իմանայ: Եւ մանաւանդ ինքը կը ջանայ որ այն ազատագրի աւելի յարգ ունենայ, որովհետև իրեն կ'երևայ թէ ինքն է պատաճառ այնպիսի հարկաւոր անձի մը: Անոր համար ալ ինչ մեծ համարմունք որ անոր վրայ ցուցուի, անուղղակի տէրը իրեն կ'ընդգունի. այս պատճառաւ երբեմն շատ աւելի վտանգաւոր է ազատագիր մը արհամարհելը՝ քան թէ անոր տէրը:

ԳԱՆԳԱՏՈՂ ԵՒԱՌԱՅ

Երեսայ հէ որ առաջ գաւիլ Գիրօմէն իւ գանգաթի, նշան է իւ անոր առաջ գաւիլ Իր Զարգար-Թէնէն լէ այլ Գիրօմէ Բար-Թէնէն:

Անգղիացի պարոն մը կը ջանար հարստացնելու իր ծառաները. ուրիշ մը երբ կը յանգիմաներ զանգղիացին՝ ըսելով թէ չգիտեր իր ծառաները վախի և հպատակութեան մէջ պահելու, կը պատասխանէ. թէ որ ուզէի իմ ծառաներէս աւելի յարգութիւն ընդունելու, ես գիտեմ՝ որ եթէ պահուին խեղճութեան մէջ, խոնարհ և վախկոտ կ'ըլլան. բայց ես անոնց երջանկութիւնը կ'ուզեմ. և փառք կու տամ Աստուծոյ այս բանին համար. որովհետև իրենց յանգիմունքներէն, զոր կը ցուցնեն կ'ըսես, կը հասկընամ որ բաւական հարստութիւն և հանգըստութիւն վայելելու հետ են: